ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ 05.12.2025 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԹԻՎ 344-Ա ՈՐՈՇՄԱՆ ԴԵՄ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետև՝ Պալատ**) խորհուրդը՝ նախագահությամբ Ռուբեն Հակոբյանի, խորհրդի անդամներ՝ Թամարա Բաղդասարյանի, Լիլիթ Ղազանչյանի, Դավիթ Վարդիկյանի, էմին Բեգլարյանի, Պավել Գյուլումյանի, Ռոման Ահարոնյանի, Դավիթ Մելքոնյանի, Ցոլակ Մարգարյանի և Արսեն Հարությունյանի,

գրավոր ընթացակարգով քննության առնելով Կարինե Մկրտչյանի բողոքը (մուտք՝ 17.01.2025թ. № 3405-2025) Պալատի նախագահի 05.12.2025 թվականի թիվ 344-Ա որոշման դեմ,

ՊԱՐԶԵՑ՝

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**.

Քաղաքացի Կարինե Մկրտչյանը (**այսուհետև նաև՝ Բողոքաբեր**), դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (**այսուհետև նաև՝ Պալատ**), հայտնել է, որ իրավաբանական օգնություն ցույց տալու խնդրանքով դիմել է փաստաբան Գոհար Գասպարյանին (**այսուհետև՝ Փաստաբան**): Փաստաբանն իրեն տրամադրել է իրավաբանական խորհրդատվություն, որն արժեցել է 10.000 ՀՀ դրամ, այնուհետև կազմել է փաստաթուղթ, որի համար վճարել է 15.000 ՀՀ դրամ: Այնուհետև Բողոքաբերը մեկ այլ իրավական հարցով դիմել է Փաստաբանին: Փաստաբանը կրկին տրամադրել է իրավաբանական խորհրդատվություն, որն արժեցել է 10.000 ՀՀ դրամ, սակայն ի տարբերություն նախորդ փաստաթղթի կազմման արժեքի, տվյալ իրավական խնդրով փաստաթուղթ կազմելու համար Փաստաբանը պահանջել է 25.000 ՀՀ դրամ: Բողոքաբերը չի համաձայնել վճարել այդ գումարը, քանի որ կարծել է, թե այս փաստաթուղթը Փաստաբանը ևս պետք է կազմի 15.000 ՀՀ դրամ հոնորարով:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Բողոքաբերը խնդրել է հարուցել կարգապահական

վարույթ և Փաստաբանին ենթարկել կարգապահական պատասխանատվության:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահը, 05.12.2025 թվականի թիվ 344-Ա որոշմամբ (**այսուհետև նաև՝ Որոշում**) փաստաբան Գոհար Սամվելի Գասպարյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելը մերժել է՝ Փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի առերևույթ բացակայության պատճառաբանությամբ:

2. **<u>ՀՀ փաստաբանների պալատի նախագահի</u>** <u>05.12.2025</u> **<u>թվականի թիվ</u>** <u>344-</u>**<u>Ա որոշման էությունը</u>**<u>.</u>

Պալատի նախագահի Որոշմամբ արձանագրվել է, որ Բողոքաբերն ըստ էության Փաստաբանին վերագրում է երկու փաստաբանական ծառայությունների դիմաց տարբեր հոնորարի չափի սահմանման վարքագիծը:

Դիմումի և առկա ապացույցների հաշվառմամբ Պալատի նախագահի Որոշմամբ արձանագրվել է, Բողոքաբերի կողմից նկարագրված հանգամանքներն ինքնին չեն կարող վկայել Օրենքի և/կամ փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների առերևույթ խախտման դրսևորման մասին, քանի որ Բողոքաբերի կողմից չի ներկայացվել որևէ հանգամանք, որը կհիմնավորեր կամ ողջամտորեն թույլ կտար ենթադրել Փաստաբանի կողմից որևէ խախտում թույլ տված լինելու մասին:

Բողոքաբերի դժգոհությունը փաստացի վերաբերում է նրան, որ Փաստաբանի կողմից նույնանման ծառայություն մատուցվելու դիմաց պահանջվել է տարբեր հոնորարներ՝ մեկ անգամ 15.000 ՀՀ դրամ գումար, իսկ հաջորդ անգամ՝ 25.000 ՀՀ դրամ գումար:

Պալատի նախագահի որոշման համաձայն՝ փաստաբանի մատուցած ծառայությունների արժեքի ձևավորումը գտնվում է փաստաբանի և հաճախորդի համաձայնության դաշտում և այդ հարաբերությունը կրում է բացառապես քաղաքացիաիրավական բնույթ:

Ներկայացված փաստերի շրջանակներում, Պալատը, դիտարկելով Փաստաբանի գործողությունները, գտել է, որ Բողոքաբերի կողմից չի ներկայացվել որևէ հիմնավոր փաստարկ, որը հնարավորություն կտա գնահատել Փաստաբանի վարքագիծը Բողոքաբերի իրավունքների ոչ պատշաճ իրականացնելու վարքագիծը, ինչի հիման վրա էլ մերժել է վարույթի հարուցումը:

3. **<u>Բողոքաբերի հիմնավորումները և պահանջը</u>**<u>.</u>

Բողոքաբերը Պալատի նախագահի Որոշման դեմ 17.12.2025 թվականին Պալատի խորհուրդ (**այսուհետև՝ Խորհուրդ**) ներկայացրել է բողոք՝ հղում կատարելով իր նախկին դիմումների շրջանակներում նկարագրված հանգամանքներին՝ ըստ էության պնդելով նույն դիրքորոշումը:

Մասնավորապես, Բողոքաբերի պնդմամբ, իր բողոքը վերաբերել է ոչ թե գումարի չափին, այլ դրա մասին Փաստաբանի կողմից իրեն նախապես չտեղեկացնելուն: Նշել է

նաև, որ ինքը գումար և ժամանակ է ծախսել և Փաստաբանը դիտավորյալ նախապես չի ասել գումարի չափը, որ ինքը չհրաժարվի ծառայությունից:

4. **Բողոքի քննության համար նշանակություն ունեցող հանգամանքները**.

Ներկայացված բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Փաստաբան Գոհար Գասպարյանի և Բողոքաբեր Կաինե Մկրտչյանի միջև առկա են եղել փաստաբան-վստահորդ հարաբերություններ: ***Նշված փաստը հաստատվում է*** *Բողոքաբերի կողմից ներկայացված նամակագրության ուսումնասիրությամբ:*

2. Գոհար Գասպարյանը Բողոքաբերին մատուցել է իրավաբանական ծառայություն, որի դիմաց ստացել է փաստաբանական ծառայության համար նախատեսված վարձատրությունը: ***Նշված փաստը հաստատվում է*** *Բողոքաբերի կողմից ներկայացված նամակագրության ուսումնասիրությամբ:*

3. Բողոքաբերը հետագայում հրաժարվել է Գոհար Գասպարյանի ծառայություններից՝ իմանալով դրա արժեքը: ***Նշված փաստը հաստատվում է*** *Բողոքաբերի կողմից ներկայացված նամակագրության ուսումնասիրությամբ:*

5. **Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը**.

Խորհուրդը գտնում է, որ Պալատի նախագահի Որոշումը պետք է թողնել անփոփոխ հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» օրենքի (այսուհետև նաև՝ Օրենք) 39.11-**րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝** *բողոքի քննության ժամանակ* ***խորհուրդը բողոքարկվող որոշումը վերանայում է միայն բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում***:

Օրենքի 39.11-**րդ հոդվածի** 9-**րդ մասի համաձայն՝** *Փաստաբանների պալատի նախագահի՝ կարգապահական վարույթ հարուցելը մերժելու մասին որոշման դեմ բողոքի քննությունից հետո խորհուրդը կարող է կայացնել հետևյալ որոշումներից մեկը.*

1) փաստաբանների պալատի նախագահի որոշումն անփոփոխ թողնելու մասին.

2) փաստաբանների պալատի նախագահի որոշումը վերացնելու մասին:

Խորհուրդը որոշում է կայացնում Փաստաբանների պալատի նախագահի կարգապահական վարույթ հարուցելը մերժելու մասին որոշումն անփոփոխ թողնելու մասին, եթե բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում կարգապահական գործը քննելով հանգում է այն եզրակացության, որ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն, այն է՝ Օրենքի կամ Կանոնագրքի պահանջների խախտումն, առերևույթ բացակայում են:

Սույն գործով Բողոքաբերը չի նշել որևէ հիմնավորում ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 05.12.2025 թվականի կարգապահական վարույթ հարուցելը մերժելու մասին թիվ 344-Ա որոշումը Օրենքի խախտմամբ ընդունած լինելու վերաբերյալ:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ ՀՀ փաստաբանների պալատի նախագահը 05.12.2025 թվականի կարգապահական վարույթ հարուցելը մերժելու մասին թիվ 344-Ա որոշմամբ թույլ չի տրվել որևէ նորմի խախտում, ուստի **Բողոքաբերների փաստարկները հերքվել են Որոշման պատճառաբանություններով և եզրահանգումներով:**

Հիմք ընդունելով վերոգրյալը և նկատի ունենալով, որ Բողոքում ներկայացված չէ որևէ հիմնավորում «Փաստաբանության մասին» օրենքի 39.11-րդ հոդվածի 9-րդ մասի 2-րդ կետով ՀՀ փաստաբանների պալատի նախագահի որոշումը վերացնելու համար, Խորհուրդը գտնում է, որ ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 05.12.2025 թվականի կարգապահական վարույթ հարուցելը մերժելու մասին թիվ 344-Ա որոշումը հիմնավոր է և պետք է այն թողնել անփոփոխ:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Օրենքի 10-րդ հոդվածի 1-**ին մասի**, 39.11-**րդ հոդվածի** 3-**րդ մասի և** 9-**րդ մասի** 1-**ին կետի պահանջներով**,

Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 05.12.2025 թվականի «Փաստաբան Գոհար Գասպարյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը քննարկելու մասին» թիվ 344-Ա որոշման դեմ Կարինե Մկրտչյանի կողմից 17.12.2025 թվականին ներկայացված բողոքը մերժել:
2. Անփոփոխ թողնել ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 05.12.2025 թվականի թիվ 344-Ա որոշումը:
3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում այն ստանալու օրվան հաջորդող օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Ռուբեն Հակոբյանի

15 հունվարի, 2026թ.
թիվ ԿԳ/03-Ա
ք. Երևան